



Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ
Հ Ա Ն ՈՒ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի
ընդհանուր իրավասության դատարանը

Ոստիկանության
դատավոր
քարտուղարության
մասնակցության
մեղադրող
տուժող
պաշտպան
ամբաստանյալ

Ա.ԱԶԱՐՅԱՆԻ
Լ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ
Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ
Լ.ԿԱԹՐՉՅԱՆԻ
Ա.ԶՈՒՎԱՆՈՎԱՅԻ
Է.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ

2014թ. մարտի 19-ին դատարանում՝ դռնբաց դատական նիստում, դատական քննության արագացված կարգով քննեց գործն ըստ մեղադրանքի էդգար Ժորայի Մելքոնյանի՝ ծնված 18.01.1983թ. Երևանում, հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ֆիզիկապես՝ առողջ, ամուսնացած, խնամքին՝ մեկ անձ, մախկինում չդատված, հաշվառված է ք.Երևան, Բագրատունյաց փողոցի 16-րդ շենքի թիվ 13 բնակարանում, բնակվում է ք.Երևան, Ֆրունզեի փողոցի 6/7 շենքի թիվ 24 բնակարանում, խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Էդգար Մելքոնյանի կողմից պաշտոնական կեղծիք կատարելու փաստի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Ս.Սնացականյանի 2013թ. նոյեմբերի 19-ի որոշմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, հարուցվել է թիվ 62214013 քրեական գործը:

2013թ. դեկտեմբերի 9-ին էդգար Մելքոնյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «նա, աշխատելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ, մշտապես իրականացնելով իշխանության ներկայացուցչի գործառույթներ և որպես այդպիսին հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ իր ծառայողական պարտականությունները չի կատարել, որն էական վնաս է պատճառել անձի իրավունքներին ու օրինական շահերին և պետության օրինական շահերին, ինչպես նաև կազմել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր և իրադարձություններ հավաստող և որպես այդպիսին պաշտոնական հանդիսացող փաստաթղթեր, որպիսի գործողությունները դրսևորվել են հետևյալում.

2013թ. հուլիսի 4-ին Երևան քաղաքի թիվ 7 փոստային բաժանմունքում Երևան քաղաքի բնակիչ Գառնիկ Չոբանյանը հավաքված մարդկանց միջից դուրս գալու ժամանակ հրել և գետնին է գցել Երևան քաղաքի բնակչուհի Լիդա Կաթոյանին, որի հետևանքով վերջինս կոնքազդրի կոտրվածքի ձևով ստացել է առողջությանը միջին ծանրության վնաս պատճառած մարմնական վնասվածք ու տեղափոխվել «Արմենիա» բժշկական կենտրոն:

Նույն օրը ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնում «Արմենիա» բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել այն մասին, որ այդ ազդուսկրի վզիկի կտորվածքով հիվանդանոց է տեղափոխվել Երևան քաղաքի բնակչուհի Լիլյա Կաթրջյանը: Ահազանգը գրանցվել է ոստիկանության Շենգավիթի բաժնի թիվ 2 մատյանում և ստացված տեղեկության ստուգումը հանձնարարվել է Էդգար Մելքոնյանին:

Էդգար Մելքոնյանը, ստանալով հանցագործությունների և պատահարների մասին այլ տեղեկություն հանդիսացող վերը նշված հաղորդումը, ժամանակ և միջոցներ չժախսելու անձնական շահագրգռվածությունից ելնելով, հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու կամ բացակայությունը պարզելու համար անհրաժեշտ ստուգումներ իրականացնելու իր պաշտոնական պարտականությունները չի կատարել: Մասնավորապես՝ նա չի կատարել ՀՀ գլխավոր դատախազի և ՆԳ նախարարի 1999թ. սեպտեմբերի 1-ի թիվ 12/354 համատեղ հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի ստորաբաժանումներում հանցագործությունների, պատահարների մասին հաղորդումներ և այլ տեղեկություններ ընդունելու, գրանցելու, հաշվառելու, քննարկելու, ընթացք տալու կարգի մասին» հրահանգի 35-րդ կետի պահանջները, չի մեկնել դեպքի վայր, հետքերի պահպանման ուղղությամբ միջոցառումներ չի ձեռնարկել, դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել, բացատրություններ չի վերցրել և այլ անհրաժեշտ գործողություններ չի կատարել:

Էդգար Մելքոնյանի կողմից իր ծառայողական պարտականությունները չկատարելու հետևանքով էական վնաս է պատճառվել պետության և պետական կազմակերպության օրինական շահերին՝ հեղինակագրվել է պետական իշխանության մարմինը՝ ՀՀ ոստիկանությունը, խաթարվել է նշված հիմնարկում հանցագործությունների գրանցման և հաշվառման սահմանված կարգն ու պայմանները, ինչպես նաև քրեական օրենսգրքով չբույլատրված արարքի հետևանքով անմիջականորեն ֆիզիկական վնաս ստացած Լիլյա Կաթրջյանը տևական ժամանակ զրկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված տուժողի իրավունքներից օգտվելու հնարավորությունից, որով էական վնաս է պատճառվել նրա իրավունքներին և օրինական շահերին:

Բացի այդ, Էդգար Մելքոնյանը, Լիլյա Կաթրջյանի մարմնական վնասվածքների վերաբերյալ ստացված տեղեկության ստուգմանն ուղղված գործողություններն ամբողջական և սահմանված կարգով կատարելու պատրանք ստեղծելու և այդ կերպ իր պաշտոնական դիրքի չարաշահումը թաքցնելու անձնական դրդումներով կազմել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր և իրադարձություններ հավաստող և որպես այդպիսին պաշտոնական հանդիսացող կեղծ փաստաթղթեր՝ «Արմենիա» ԲԿ-ի կրիմինալ մատյանի գնման մասին 2013թ. հուլիսի 4-ի արձանագրությունը, Լիլյա Խաչիկի Կաթրջյանից բացատրություն վերցնելու մասին 2013թ. հուլիսի 5-ի արձանագրությունը և Ալիսա Ռուբենի Համբարձումյանից բացատրություն վերցնելու մասին 2013թ. հուլիսի 6-ի արձանագրությունը, որոնցում ամբողջությամբ կեղծ տեղեկություններ է մտցրել, իբրև հիշյալ բժշկական կենտրոնում Լիլյա Կաթրջյանը հայտարարել է, թե նշված մարմնական վնասվածքը ստացել է Գ.Նժդեհի փողոցում գտնվող փոստում սայթաքելու և վայր ընկնելու հետևանքով, իբրև Լիլյա Կաթրջյանն իր բացատրությունում հայտնել է, որ վնասվածքը ստացել է ոտքերը թուլանալու և վայր ընկնելու արդյունքում, ինչպես նաև իբրև Ալիսա Համբարձումյանը հանդիսանում է Լիլյա Կաթրջյանի դուստրը և հաստատում է մոր կողմից մարմնական վնասվածքները վայր ընկնելու հետևանքով ստանալու հանգամանքը: Այնուհետև Էդգար Մելքոնյանը կազմել է «Արմենիա» ԲԿ-ից ստացված ահազանգով ստեղծված նյութերի փաստերի ստուգման արդյունքների վերաբերյալ 2013թ. հուլիսի 7-ի կեղծ եզրակացություն, որում նույնպես կեղծ տեղեկություններ է մտցրել, թե կատարված ստուգմամբ պարզել է, որ Լիլյա Կաթրջյանը մարմնական վնասվածքը ստացել է իր անզգուշության պատճառով, որի հիման վրա էլ նյութերը հանցագործության հատկանիշների բացակայության հիմքով կցվել են ոստիկանության բաժնի թիվ 2 մատյանին առընթեր թղթապանակին»:

2014թ. փետրվարի 4-ին քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Մինչ դատաքննությունն սկսելն ամբաստանյալ էղգար Սելբոնյանը միջնորդեց դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքի հետ:

Դատարան հասցեագրած դիմումով տուժող Լիդա Կաթրջյանը չառարկեց ամբաստանյալի միջնորդության դեմ և նշեց, որ նրա նկատմամբ պահանջ չունի:

Դատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375¹-րդ և 375²-րդ հոդվածներով նախատեսված պայմանները, որոշում է կայացրել արագացված կարգով դատական քննություն անցկացնելու մասին:

Դատարանը հիմք ընդունելով մեղադրանքում դրված ապացույցները գտնում է, որ ամբաստանյալ էղգար Սելբոնյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ, որոնց համար նա պետք է պատասխանատվության ենթարկվի:

Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս՝ պատժի տեսակը և չափը որոշելիս, դատարանը հաշվի է առնում նրա կատարած հանցագործությունների հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, նրա անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Որպես ամբաստանյալ էղգար Սելբոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի է առնում այն, որ նրա խնամքի տակ է գտնվում մեկամյա երեխան, ամբաստանյալն անկեղծորեն զղջացել է կատարած հանցագործությունների համար, նախաքննության ժամանակ տվել է խոստովանական ցուցմունքներ, որոնցով ակտիվորեն աջակցել է հանցագործությունները բացահայտելուն:

Որպես ամբաստանյալ էղգար Սելբոնյանի անձը բնութագրող տվյալ դատարանը հաշվի է առնում նրա նախկինում դատապարտված չլինելը:

Ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները բացակայում են:

Դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ որպես պատժատեսակ պետք է նշանակվի ազատազրկում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքի զրկումով:

Սկստի ունենալով, որ էղգար Սելբոնյանը կատարել է մի քանի հանցագործություն և հանցանքների համակցությունն ընդգրկում է միջին ծանրության հանցանք, ուստի նրա նկատմամբ վերջնական պատիժը պետք է նշանակվի ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով:

Մինչև ժամանակ դատարանը գտնում է, որ ամբաստանյալ էղգար Սելբոնյանը «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման ուժով պետք է ազատվի դատավճռով նշանակվող հիմնական պատժից՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ամբաստանյալ էղգար Սելբոնյանի արարքների համար պատասխանատվություն սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի և 314-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիաները՝ որպես առավել խիստ պատիժ, նախատեսում են ազատազրկում՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Հաշվի առնելով էղգար Սելբոնյանի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող վերը թվարկված հանգամանքները, ծանրացնող հանգամանքների բացակայությունը, ինչպես նաև գործն արագացված դատական քննության կարգի կիրառմամբ քննության առնելու հանգամանքը, դատարանը գտնում է, որ էղգար Սելբոնյանի նկատմամբ նշանակվող վերջնական պատիժը չպետք է գերազանցի երեք տարի ժամկետով ազատազրկումը:

«Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարելիցի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պատժից պետք է ազատել և անձանց, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:

Բացի այդ, նույն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պատժից պետք է ազատել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխա ունեցող այն անձանց, որոնց նկատմամբ նշանակվել է առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկում:

Վերոհիշյալ համաներման ակտով նախատեսված համաներման կիրառման սահմանափակումներն էղգար Մելքոնյանի վրա չեն տարածվում:

Ամբաստանյալի նկատմամբ համաներման ակտը կիրառելիս դատարանը հաշվի է առնում այն, որ «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման 10-րդ կետի համաձայն՝ համաներման որոշումը չի ազատում դատարանների դատավճիռներով նշանակված լրացուցիչ պատիժներից:

Հետևաբար, համաներման ակտի կիրառմանը ամբաստանյալ էղգար Մելքոնյանին պետք է ազատել միայն սույն դատավճռով նշանակվող հիմնական ազատազրկման ձևով, պատժից:

Քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցը, դատարանը գտնում է, որ այն պետք է վերացնել:

Քննության առնելով իրեղեն ապացույցի տնօրինման հարցը, դատարանը գտնում է, որ ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի թիվ 2334 նյութերը պետք է թողնել քրեական գործում:

Վերոգրյալի հիման վրա՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին, 2-րդ, 10-րդ, 13-րդ, 20-րդ կետերը, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119, 357, 359, 360 և 375³ հոդվածներով՝ դատարանը:

Վ Ն Ո Ւ Ց

էղգար Ժորայի Մելքոնյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով և պատիժ նշանակել:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 1 (մեկ) տարի ժամկետով

ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկում 6 (վեց) ամիս ժամկետով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով 1 (մեկ) տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի կարգով՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով էղգար Ժորայի Մելքոնյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ու կազմակերպություններում պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով 1 (մեկ) տարի ժամկետով:

էղգար Ժորայի Մելքոնյանի նկատմամբ կիրառել «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 2013թ. հոկտեմբերի 3-ի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը և 2-րդ կետի 4-րդ ենթակետն ու նրան ազատել հիմնական ազատազրկման ձևով, նշանակված պատժից:

էղգար Մելքոնյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, վերացնել:

իրեղեն ապացույց հանդիսացող ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնի թիվ 2334 նյութերը թողնել քրեական գործում:

Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ մեկամսյա ժամկետում:

Դատավճիռը չի կարող բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքով:

ԴԱՏԱՎՈՐ

Ա.ԱԶԱՐՅԱՆ

Ծանոթություն - Դատավճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ

Ա.ԱԶԱՐՅԱՆ